ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

<<27>> փետրվարի 2025 թ. քաղաք Մարալիկ

2025 թվականի մարտի 27-ին, ժամը 15:30-ին Անիի համայնքապետարանի վարչական շենքի ավագանու նիստերի դահլիճում տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու հերթական նիստը:

Նիստը վարում էր՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար, ավագանու անդամ՝ Արման Սարիբեկյանը:

Նիստն արձանագրում էր՝ Անիի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Հարություն Համբարյանը:

Զեկուցողը նշեց, որ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն 2025 թվականի ավագանու հերթական առաջին նստաշրջանը սկսվում է փետրվարի երկրորդ երեքշաբթի օրվանից մինչև հունիսի վերջին չորեքշաբթին: Անի համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 18-ի N 7-Ա որոշման և համայնքի ավագանու կանոնակարգի համաձայն, Անի համայնքի ավագանու նստաշրջանների գումարման համայնքի ավագանու հերթական նիստերի անցկացման օր է սահմանված յուրաքանչյուր ամսի վերջին հինգշաբթին, այսինքն այսօր:

Տեղեկացվեց, որ <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի համաձայն, ավագանու հերթական նիստից մեկ շաբաթ առաջ հրապարակվել է ավագանու այսօրվա նիստի օրակարգը, նշվել է նիստի անցկացման վայրը և ժամանակը: Այդ տեղեկությունները փակցվել են համայնքի ղեկավարի և ավագանու նստավայրում, տարածվել են զանգվածային լրատվության միջոցներով, տեղադրվել են մարզպետարանի, համայնքապետարանի պաշտոնական համացանցային կայքերում և հրապարակային ծանուցումների www.Azdarar.am կայքում:

Նիստի օրակարգում ընդգրկված որոշումների նախագծերը մեկ շաբաթ առաջ տրամադրվել են ավագանու անդամներին և տեղադրվել համայնքի պաշտոնական կայքում:

Ավագանու նիստին ներկա անդամների հաշվառման արդյունքում արձանագրվեց, որ Անի համայնքի ավագանու 21 անդամներից, համայնքի ավագանու հերթական նիստին մասնակցում են <<Քաղաքացիական պայմանագիր>> կուսակցության ավագանու 9 անդամները՝

Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ

Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ

Ա. ՇԱԲՈՅԱՆ

Հ. ԶԱՏԻԿՅԱՆ

Ժ. ԱԼԵՔՅԱՆ

Ն. ՍԱՐՈՅԱՆ

Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ

<<ԱԶԳ-ՀԱՄԱՅՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ ավագանու անդամ՝ Գագիկ Հակոբյանը և Գագիկ Պողոսյանը:

Հարգելի պատճառով ավագանու նիստից բացակայում են <<Քաղաքացիական պայմանագիր>> կուսակցության ավագանու անդամ Գոռ Աղաբեկյանը /բացակայում է Հանրապետությունից/, Մերի Ենոքյանը /հետծննդյան արձակուրդ/ և <<ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ավագանու անդամ՝ Մուրադ Ասլանյանը /աշխատանքի բերումով/:

Անհարգելի կարգով բացակայում են՝

<<ԱԶԳ-ՀԱՄԱՅՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ ավագանու 5 անդամները.

<<ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ավագանու 2 անդամները,

<<ԻՄ ՀԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ավագանու 1 անդամը:

Դրանով հանդերձ, ավագանու նիստի քվորումը ապահովված է /ավագանու ներկա անդամներ՝ 11, բացակա՝ 10/ համայնքի ավագանու հերթական նիստը հայտարարում եմ բացված:

Համայնքի ավագանու նիստին ներկա են համայնքի ղեկավարի տեղակալները, աշխատակազմի քարտուղարը, համայնքապետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ, համայնքի բնակավայրերի վարչական ղեկավարներ, համայնքային ենթակայության կազմակերպությունների տնօրեններ:

Զեկուցողը համայնքի ավագանուն տեղեկացրեց, որ <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, հրապարակում եմ, որ <<ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔ>> կուսակցությունից ավագանու անդամի

մանդատ ստացած Արփինե Վարդանի Սաղաթելյանը 2025 թվականի մարտի 4-ին Անի համայնքի ղեկավարին անձամբ ներկայացրել է դիմում՝ ավագանու անդամի իր լիազորությունները վաղաժամկետ դադ<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին համայնքի ղեկավարի կողմից 2025 թվականի մարտի 14-ին կազմվել է N 1 արձանագրությունը <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն համապատասխան գրությամբ ուղարկվել է Թիվ 33 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին՝ Անի համայնքի ավագանու վերը նշված անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ:

Թիվ 33 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2025 թվականի մարտի 21-ի N 21 արձանագրոիթյամբ <<ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱՋԱՆՔ>> կուսակցության ընտրական ցուցակից ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադրեցված ավագանու անդամ Արփինե Վարդանի Սաղաթելյանի մանդատը տրվել է <<ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱՋԱՆՔ>> կուսակցության ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածու՝ Նարեկ Արտավազդի Ասատրյանին:

Զեկուցողը շնորհավորեց ավագանու անդամի մանդատ ստացած մեր Նարեկ Արտավազդի Ասատրյանին, ցանկացավ արդյունավետ և կառուցողական աշխատանք՝ Անի համայնքի տնտեսական և սոցիալական զարգացման, համայնքի բնակչության բարեկեցության ապահովման կարևորագույն գործում:

Միաժամանակ համոզմունք հայտնեց, որ ավագանու նորընտիր անդամը ակտիվորեն կներգրավվեն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով ավագանու անդամին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացմանը:

Ներկայացվեց համայնքի ավագանու հերթական նիստի օրակարգի նախագիծը՝

<u>ՕՐԱԿԱՐԳ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

1) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

2) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Հայկ Սիմոնյան/

3) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի Հարություն Համբարյան/

4) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՈՉ ՊԻՏԱՆԻ ԹՎՈՎ 4 /ՉՈՐՍ/ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար տեղակալ Զորիկ Խաչատրյան/

5) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի N 62-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար տեղակալ Զորիկ Խաչատրյան/

6) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 29-Ի N 30-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար տեղակալ Զորիկ Խաչատրյան/

7) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 27-Ի N 25-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար տեղակալ Զորիկ Խաչատրյան/

8) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 27-Ի N 26-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար տեղակալ Զորիկ Խաչատրյան/

9) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 162-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

10) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 165-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

11) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 181-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Հայկ Սիմոնյան/

12) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՐԱԿԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՁԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԵՐԿՈՒ ԿՏՈՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹՈՎ, ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ՄՐՑՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար տեղակալ Զորիկ Խաչատրյան/

13) <<ՊՐԵՍ ՍՏԵՆԴ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՄԱՐԶ ՇԻՐԱԿ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔ ՔԱՂԱՔ ՄԱՐԱԼԻԿ ՀՐ. ՇԱՀԻՆՅԱՆ ՓՈՂՈՑ 16/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԿՐՊԱԿԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ 0,00062 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար տեղակալ Զորիկ Խաչատրյան/

14) ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ /GIZ/ ԿՈՂՄԻՑ ԳՈՐԾԱԴՐՎՈՂ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար տեղակալ Զորիկ Խաչատրյան/

15) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 100 ԵՎ ԱՎԵԼ ՏԱՐԵԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

16) ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՅԱՑԱԾ ԵՐԳԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆՈՒՄ ՄՐՑԱՆԱԿԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ՏԵՂ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑ ՍԱՄՎԵԼ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Հայկ Սիմոնյան/

17) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ԱՐԿԱԴԻ ՏԵՐ-ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ 6/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-003-0613-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,000192 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ԿԱՐԳՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ՍԱՄՎԵԼ ՄԱՆՈՒԿԻ ԺԱԺՈՅԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎՃԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար տեղակալ Զորիկ Խաչատրյան/

18) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ՕՐԻՆԱԿԱՆ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏԱԾ ՎՃՌՈՎ /ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾ՝ ՇԴ/0347/02/24/ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԵՍՏԱԿ ՀԱԲԵԹԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՐԶ ՇԻՐԱԿ, ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ՔԱՂԱՔ ՄԱՐԱԼԻԿ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 14/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆԱՍՆԱՇԵՆՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 08-003-0026-ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,03205 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԵՍՏԱԿ ՀԱԲԵԹԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար տեղակալ Զորիկ Խաչատրյան/

Հայտարարվեց, որ ավագանու օրակարգի նախագիծը հրապարակված է, եթե օրակարգի նախագծի վերաբերյալ կան առաջարկություններ և դիտողություններ խնդրվեց ներկայացնել:

Օրակարգի նախագծի 2-րդ հարցի վերաբեյալ առաջարկությամբ հանդես եկավ Անիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Հայկ Սիմոնյանը:

Առաջարկություն ներկայացվեց օրակարգի նախագծից հանել 2) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> հարցը, քնի որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից ներկայացված ուղեցույցի համաձայն, նախ պետք է համայնքի ղեկավարին կից ստեղծել խորհրդակցական մարմին, ստեղծել <<ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ>>, հանդիպումներ անցկացնել բնակավայրերի բնակչության հետ, գույքագրել արված առաջարկությունները, անցկացնել հանրային քննարկումներ, մշակել <<ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ>>, անցկացնել ծրագրային առաջարկների ընտրության քվեարկություն, մշակել <<ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՋԱՐԿԻ ՀԱՅՏ>> դրանից հետո միայն այն ներկայացնել համայնքի ավագանու քննարկմանը:

Քվեարկության արդյունքում ներկայացված առաջարկությունն ընդունվեց և կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու հերթական նիստի օրակարգն հաստատվեց:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի դրույթով.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2025 թվականի առաջին նստաշրջանի 2025 թվականի մարտի 27-ին ժամը 1530-ին Անիի համայնքապետարանի վարչական շենքի նիստերի դահլիճում կայանալիք ավագանու հերթական նիստի հետևյալ օրակարգը՝

1) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

2) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի Հարություն Համբարյան/

3) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՈՉ ՊԻՏԱՆԻ ԹՎՈՎ 4 /ՁՈՐՍ/ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար տեղակալ Զորիկ Խաչատրյան/

4) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի N 62-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար տեղակալ Զորիկ Խաչատրյան/

5) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 29-Ի N 30-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար տեղակալ Զորիկ Խաչատրյան/

6) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 27-Ի N 25-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար տեղակալ Զորիկ Խաչատրյան/

7) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 27-Ի N 26-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար տեղակալ Զորիկ Խաչատրյան/

8) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 162-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

9) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 165-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

10) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 181-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Հայկ Սիմոնյան/

11) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՐԱԿԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԵՐԿՈՒ ԿՏՈՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹՈՎ, ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ՄՐՑՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՎԱՐՉԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար տեղակալ Զորիկ Խաչատրյան/

12) <<ՊՐԵՍ ՍՏԵՆԴ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՄԱՐԶ ՇԻՐԱԿ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔ ՔԱՂԱՔ ՄԱՐԱԼԻԿ ՀՐ. ՇԱՀԻՆՅԱՆ ՓՈՂՈՑ 16/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԿՐՊԱԿԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ 0,00062 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար տեղակալ Զորիկ Խաչատրյան/

13) ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ /GIZ/ ԿՈՂՄԻՑ ԳՈՐԾԱԴՐՎՈՂ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար տեղակալ Զորիկ Խաչատրյան/

14) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 100 ԵՎ ԱՎԵԼ ՏԱՐԵԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

15) ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՅԱՑԱԾ ԵՐԳԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆՈՒՄ ՄՐՑԱՆԱԿԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ՏԵՂ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑ ՍԱՄՎԵԼ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Հայկ Սիմոնյան/

16) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ԱՐԿԱԴԻ ՏԵՐ-ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ 6/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-003-0613-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,000192 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ԿԱՐԳՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ՍԱՄՎԵԼ ՄԱՆՈՒԿԻ ԺԱԺՈՅԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎՃԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար տեղակալ Զորիկ Խաչատրյան/

17) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ՕՐԻՆԱԿԱՆ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏԱԾ ՎՃՌՈՎ /ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾ՝ ՇԴ/0347/02/24/ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԵՍՏԱԿ ՀԱԲԵԹԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՐԶ ՇԻՐԱԿ, ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ՔԱՂԱՔ ՄԱՐԱԼԻԿ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 14/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆԱՍՆԱՇԵՆՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 08-003-0026-

ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,03205 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԵՍՏԱԿ ՀԱԲԵԹԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

Օրակարգ-2

2) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Հարություն Համբարյան/

Զեկուցողը համայնքի ավագանուն ներկայացրեց Անի համայնքի 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանի նախագիծը և պատասխանեց ավագանու անդամների հարցերին:

Նշվեց, որ որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-րդ կետի, 82.1-րդ հոդվածի դրույթներով.

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդունվեց:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-րդ կետի, 82.1-րդ հոդվածի դրույթներով.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին

որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Հավելվածը կցվում է արձանագրությանը:

Օրակարգի նախագծի 3-7 հարցերը ներկայացնելու համար ձայնը տրվեց Անի համայնքի ղեկավար տեղակալ Զորիկ Խաչատրյանին

Օրակարգ-3

3) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՈՉ ՊԻՏԱՆԻ ԹՎՈՎ 4 /ՉՈՐՍ/ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար տեղակալ Զորիկ Խաչատրյան/

Զեկուցողը նշեց, որ Անի համայնքի սեփականությունը հանդիսացող թվով 4 /չորս/ միավոր տրանսպորտային միջոցների ֆիզիկական և բարոյական մաշվածության պատճառով հիմնականում չեն շահագործվում, իսկ դրանց հիմնանորոգումը պահանջում է ավելի մեծ ծախսեր, քան նրանց շուկայական արժեքն է:

<<Գնահատման գործունեության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, համապատասխան լիցենզավորում ունեցող՝ <<Ա. Գ. ԷՍԹԵՅԹ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից գնահարվել են Անի համայնքի սեփականությունը հանդիսացող 4 /չորս/ միավոր տրանսպորտային միջոցների շուկայական արժեքները և համայնքապետարանին են տրամադրվել գնահատման 2025 թվականի փետրվարի 14-ի N 02142521 հաշվետվությունը:

Աճուրդով օտարվող՝ Անի համայնքի սեփականությունը հանդիսացող տրանսպորտային միջոցների համար որոշման նախագծով սահմանվել են հետևյալ մեկնարկային գներն ու աճուրդի պայմանները

N	Տրանսպորտային միջոցի գտնվելու վայրը	Տրանսպորտային միջոցի անվանումը, Մակնիշը	Տրանսպորտային միջոցի պետհամարանիշը	Թափքի և /կամ/ նույնականացման համարը	Օտարման եղանակը	Շուկայական արժեքի գնահատումը (<< դրամ)	Տվյալ տրանսպորտային միջոցի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը (<< դրամ)	Աճուրդի նախավճարի չափը՝ մեկնարկային գնի նկատմամբ (%)	Աճուրդի մասնակցի գնային առաջարկ նվազագույն չափ մեկնարկայինգնի նկատմամբ (%)
1.	Մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Մադաթյան փողոց 1 /Ավտոպարկ/	GAZ 3102	372 AX 61	X96310200714 06655	Բաց աճուրդ	800 000	900 000	50.0	5.0
2.	Մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Մադաթյան փողոց 1 /Ավտոպարկ/	GAZ 3110	776 LL 11	31168226	Բաց աճուրդ	500 000	700 000	50.0	5.0
3.	Մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Մադաթյան փողոց 1 /Ավտոպարկ/	GAZ KO-413 (GAZ-53)	858 LL 70	XTH531900K11 75172	Բաց աճուրդ	460 000	560 000	50.0	5.0
4.	Մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Մադաթյան փողոց 1 /Ավտոպարկ/	VAZ 21214	761CR61	XTA212140517 80770	Բաց աճուրդ	700 000	750 000	50.0	5.0

Որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, <<Հրապարակային սակարկությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-

ին հոդվածի 1-ին մասի, 5-րդ հոդվածի, <<Գնահատման գործունեության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով:

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդունվեց:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՈՉ ՊԻՏԱՆԻ ԹՎՈՎ 4 /ՉՈՐՍ/ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, <<Հրապարակային սակարկությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի, 5-րդ հոդվածի, <<Գնահատման գործունեության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, հիմք ընդունելով <<Ա. Գ. ԷՍԹԵՅԹ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող 4 /չորս/ միավոր տրանսպորտային միջոցների շուկայական արժեքների գնահատման 2025 թվականի փետրվարի 14-ի N 02142521 հաշվետվությունը,

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող սույն որոշման հավելվածում նշված շահագործման համար ոչ պիտանի թվով 4 /չորս/ միավոր տրանսպորատային միջոցները հրապարակային սակարկությունների միջոցով օտարել բաց աճուրդով:

2. Հաստատել սույն որոշման հավելվածով նախատեսված աճուրդով օտարվող տրանսպորատային միջոցների մեկնարկային գներն ու աճուրդի պայմանները՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Հավելվածը կցվում է արձանագրությանը

<u>Օրակարգ-4</u>

4) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի N 62-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար տեղակալ Զորիկ Խաչատրյան/

Զեկուցողը նշեց, որ Անի համայնքի ավագնու 2024 թվականի մայիսի 30-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականություն հանդիսացող և շահագործման ոչ պիտանի տրանսպորտային միջները աճուրդով օտարելու, օտարման մեկնարկային գինն ու պայմանները հաստատելու մասին>> N 62-Ա որոշման համաձայն նախատեսված էր աճուրդով օտարել Անի համայնքի սեփականություն հանդիսացող և շահագործման ոչ պիտանի թվով 8 միավոր տրանսպորտային միջոցներ:

Անիի համայնքապետարանի կողմից 2024 թվականի օգոստոսի 16-ին անցկացված Անի համայնքի ավագնու նշված որոշմամբ նախատեսված Անի համայնքի սեփականություն հանդիսացող թվով 8 տրանսպորտային միջոցներից օրենքով սահմանված կարգով օտարվել է միայն 2-ը, իսկ 6 տրանսպորտային միջոցների աճուրդին մասնակցելու համար հայտեր չեն ներկայացվել և աճուրդները չեն կայացել:

Որոշման նախագծով նախատեսվում է 20 տոկոսով նվազեցնել 6 տրանսպորտային միջոցների օտարման մեկնարկային գները, որը պակաս չէ <<Ա. Գ. ԷՍԹԵՅԹ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրանսպորտային միջոցների գնահատման շուկայական արժեքներից:

Աճուրդով օտարվող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող տրանսպորտային միջոցների մեկնարկային գինն ու աճուրդի պայմանները

N	Տրանսպորտային միջոցի գտնվելու վայրը	Տրանսպորտային միջոցի անվանումը, Մակնիշը	Տրանսպորտային միջոցի պետհամարանիշը	Թափքի և /կամ/ նույնականացման համարը	Օտարման եղանակը	Շուկայական արժեքի գնահատումը (<< դրամ)	Տվյալ տրանսպորտային միջոցի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը (<< դրամ)	Աճուրդի նախավճարի չափը՝ մեկնարկային գնի նկատմամբ (%)	Աճուրդի մասնակցի գնային առաջարկի նվազագույն չափը մեկնարկային գնի նկատմամբ (%)
1.	Մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Մադաթյան փողոց 1 /Ավտոպարկ/	GAZ 24-10	841 GR 61	530172	Բաց աճուրդ	54 000	80 000	50.0	5.0
2.	Մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Մադաթյան փողոց 1 /Ավտոպարկ/	GAZ 24-10	842 GR 61	531626	Բաց աճուրդ	65 000	80 000	50.0	5.0
3.	Մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Մադաթյան փողոց 1 /Ավտոպարկ/	GAZ 3129	621 LL 11	XTH310290T 0436000	Բաց աճուրդ	90 000	90 000	50.0	5,0
4.	Մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Մադաթյան փողոց 1 /Ավտոպարկ/	ZIL MMZ	861 LL 70	-	Բաց աճուրդ	330 000	510 000	50.0	5.0

5.	Մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Մադաթյան փողոց 1 /Ավտոպարկ/	TAYOTA HARRIER	268 LU 48	SXU1000149 53	Բաց աճուրդ	780 000	780 000	50.0	5.0
6.	Մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Մադաթյան փողոց 1 /Ավտոպարկ/	T-170	2976 LS	-	Բաց աճուրդ	280 000	640 000	50.0	5.0

Որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, <<Հրապարակային սակարկությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի դրույթներով և հիմք ընդունելով <<Ա. Գ. ԷՍԹԵՅԹ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող տրանսպորտային միջոցների շուկայական արժեքների գնահատման 2024 թվականի մարտի 22-ի հաշվետվությունը,

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդունվեց:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի N 62-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, <<Հրապարակային սակարկությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի դրույթներով, հիմք ընդունելով <<Ա. Գ. ԷՍԹԵՅԹ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող 8 /ութ/ միավոր տրանսպորտային միջոցների շուկայական արժեքների գնահատման 2024 թվականի մարտի 22-ի հաշվետվությունը, հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի կողմից 2024 թվականի օգոստոսի 16-ին անցկացված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի մայիսի 30-ի N 62-Ա որոշմամբ նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի

համայնքի սեփականություն հանդիսացող թվով 8 տրանսպորտային միջներից օրենքով սահմանված կարգով օտարվել է միայն 2-ը, իսկ 6 տրանսպորտային միջոցների աճուրդին մասնակցելու համար հայտեր չեն ներկայացվել.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին
որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագնու 2024 թվականի մայիսի 30-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականություն հանդիսացող և շահագործման ոչ պիտանի տրանսպորտային միջները աճուրդով օտարելու, օտարման մեկնարկային գինն ու պայմանները հաստատելու մասին>> N 62-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Հավելվածը կցվում է արձանագրությանը:

Օրակարգ-5

5) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 29-Ի N 30-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար տեղակալ Զորիկ Խաչատրյան/

Զեկուցողը նշեց, որ Անի համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 29-ի N 30-Ա որոշմամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2013 թվականի մարտի 29-ի օրինական ուժի մեջ մտած վճիռը /քաղաքացիական գործ՝ ՇԴ3/0041/02/13/ քաղաքացի Գագիկ Հրանտի Հովհաննիսյանի սեփականության իրավունքը ճանաչված Անի համայնքի Շիրակավան բնակավայրի 4-րդ փողոց, թիվ 33/2 հողամաս հասցեում գտնվող ճաշարանի շենքի 1/4 մասի սպասարկման համար նախատեսված համայնքի սեփականություն հանդիսացող 08-090-0016-կադաստրային ծածկագրով հողատարածքում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0,00927 հեկտար մակերեսով հողամասը, ուղղակի վաճառքով, տվյալ հողամասի կադաստրային արժեքի չափով, նախատեսված է օտարել քաղաքացուն:

Սակայն Կադաստրի կոմիտեի 22/01/2025 թ. N Կ-22012025-08-0172 որոշմամբ իրավունքի պետական գրանցումը կասեցվել է կրկնվող հասցե լինելու պատճառով:

Որոշման նախագծով նախատեսվում է Անի համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 29-ի N 30-Ա որոշման մեջ նշված <<թիվ 33/2 հողամաս>> թիվն ու բառերը փոխարինել <<թիվ 33/3 հողամաս>> թվով և բառերով և հնարավորություն տալ քաղաքացուն՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքները ենթարկել պետական գրանցման:

Որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի դրույթներով և հիմք ընդունվել Կոմիտեի 22/01/2025 թ. <<Գույքի նկատմամբ իրավունքի /սահմանափակման/ պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին>> N Կ-22012025-08-0172 որոշումը /կրկվող հասցեավորում/:

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդունվեց:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 29-Ի N 30-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 22/01/2025 թ. <<Գույիքի նկատմամբ իրավունքի /սահմանափակման/ պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին>> N Կ-22012025-08-0172 որոշումը /կրկվող հասցեավորում/.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 29-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ընդհանուր իրավասության դատարանի 2013 թվականի մարտի 29-ի օրինական ուժի մեջ մտած վճռով

/քաղաքացիական գործ՝ ՇԴ3/0041/02/13/ քաղաքացի Գագիկ Հրանտի Հովհաննիսյանի սեփականության իրավունքը ճանաչված մարզ Շիրակ, Անի համայնք, Շիրակավան բնակավայր, 4-րդ փողոց, թիվ 33/2 հողմաս հասցեում գտնվող ճաշարանի շենքի ¼ մասի պահպանման համար նախատեսված 08-090-0016- կադաստրային ծածկագրով հողատարածքում գտնվող 0,00927 հեկտար հողամասը ուղղակի վաճառքով քաղաքացի Գագիկ Հրանտի Հովհաննիսյանին վաճառելու մասին>> N 30-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

ա) Որոշման 1-ն կետում նշված <<թիվ 33/2 հողամաս>> թիվն ու բառերը փոխարինել <<թիվ 33/3 հողամաս>> թվով և բառերով:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացուն սույն որոշման մասին պատշաճ ծանուցման պահից:

<u>Օրակարգ-6</u>

6) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 27-Ի N 25-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար տեղակալ Զորիկ Խաչատրյան/

Զեկուցողը նշեց, որ համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 27-ի N 25-Ա որոշմամբ նախատեսվել էր Քաղաքացի Սերյոժա Հմայակի Ալեքսանյանին սեփականության իրավունքով պատկանող <<OPEL ASTRA 1.61>> մակնիշի 34 CV 840 պետ. համարանիշի տրանսպորտային փոխադրամիջոցի նկատմամբ սահմանել գույքահարկի գծով արտոնություն:

Ներքին գործերի նախարարության ոստիկանության Շիրակի մարզային վարչության Ախուրյանի բաժնի պետ, ոստիկանության գնդապետ Մ. Գ. Մխիթարյանի 2023 թվականի դեկտեմբերի 8-ի N 70/1-3241 տեղեկանքի համաձայն սեփականության իրավունքով քաղաքացի Սերյոժա Հմայակի Ալեքսանյանին սեփականության իրավունքով պատկանող <<OPEL ASTRA 1.61>> մակնիշի 34 CV 840 պետ. համարանիշի ավտոմեքենան 20.07.2017 թվականին վթարված վիճակում մինչև օրս գտնվում է Ախուրյանի բաժնի հատուկ պահպանվող տարածքում, Սակայն Անի համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 27-ի N 25-Ա որոշմամբ գույքահակի արտոնություն է սահմանվել միայն 2021-2024 թվականների համար: Որոշման նախագծով նախատեսվում է ուղղել թույլ տրված անճշտությունը և գույքահարկի արտոնություն սահմանել 20.07.2017թ-ից մինչև 27.03.2025 թվականի համար հաշվարկված ապառքների և տույժերի նխատմամբ, որը գումարային առումով կազմում է 98 638 /ինսունութ հազար վեց հարյուր երեսունութ>> ՀՀ դրամ:

Որոշման նախագծով նախատեսվում է Համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 27-ի N 25-Ա որոշման 1-ին կետում նշված <<54533 /հիսունչորս հազար հինգ հարյուր երեսուներեք/>> թիվն ու բառերը փոխարինել <<98 638 /իննսունութ հազար վեց հարյուր երեսունութ>> թվով ու բառերով:

Որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 2-րդ մասի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի դրույթներով և հիմք է ընդունվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված <<Համայնքի ավագանու կողմից գույքահարկի և հողի հարկի արտոնություններ սահմանելու կարգի>> 8-րդ կետը, Ներքին գործերի նախարարության ոստիկանության Շիրակի մարզային վարչության Ախուրյանի բաժնի պետ, ոստիկանության գնդապետ Մ. Գ. Մխիթարյանի 2023 թվականի դեկտեմբերի 8-ի N 70/1-3241 տեղեկանքը, համաձայն որի սեփականության իրավունքով քաղաքացի Սերյոժա Հմայակի Ալեքսանյանին սեփականության իրավունքով պատկանող <<OPEL ASTRA 1.61>> մակնիշի 34 CV 840 պետ. համարանիշի ավտոմեքենան 20.07.2017 թվականին վթարված վիճակում մինչև օրս գտնվում է Ախուրյանի բաժնի հատուկ պահպանվող տարածքում :

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդունվեց:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 27-Ի N 25-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 2-րդ մասի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված <<Համայնքի ավագանու կողմից գույքահարկի եվ հողի հարկի արտոնություններ սահմանելու կարգի>> 8-րդ կետը, հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության Շիրակի մարզային վարչության Ախուրյանի բաժնի պետ, ոստիկանության գնդապետ Մ. Գ. Մխիթարյանի 2023 թվականի դեկտեմբերի 8-ի N 70/1-3241 տեղեկանքի համաձայն սեփականության իրավունքով քաղաքացի Սերյոժա Հմայակի Ալեքսանյանին սեփականության իրավունքով պատկանող <<OPEL ASTRA 1.61>> մակնիշի 34 CV 840 պետ. համարանիշի ավտոմեքենան 20.07.2017

թվականին վթարված վիճակում մինչև օրս գտնվում է Ախուրյանի բաժնի հատուկ պահպանվող տարածքում, իսկ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 27-ի N 25-Ա որոշմամբ գույքահակի արտոնություն է սահմանվել միայն 2021-2024 թվականների համար, թույլ տրված անճշտությունն ուղղելու նպատակով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 27-ի <<Քաղաքացի Սերյոժա Հմայակի Ալեքսանյանին սեփականության իրավունքով պատկանող <<OPEL ASTRA 1.61>> մակնիշի 34 CV 840 պետ. համարանիշի տրանսպորտային փոխադրամիջոցի նկատմամբ գույքահարկի գծով արտոնություն սահմանելու մասին>> N 25-Ա որոշման 1-ին կետում նշված <<54533 /հիսունչորս հազար հինգ հարյուր երեսուներեք/>> թիվն ու բառերը փոխարինել <<98 638 /իննսունութ հազար վեց հարյուր երեսունութ>> թվով ու բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարկման հաջորդող օրվանից:

<u>Օրակարգ-7</u>

7) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 27-Ի N 26-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար տեղակալ Զորիկ Խաչատրյան/

Զեկուցողը նշեց, որ օրակարգի այս հարցը առնչվում է քննարկված նախորդ հարցին:

Այս դեպքում որոշման նախագծով նախատեսվում է համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 27-ի N 26-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն և սահմանել գույքահակի մասնակի արտոնություն՝ քաղաքացի Հակոբ Հովհաննեսի Հակոբյանին /Անձնագիր՝ AT0433629, տրված՝ 15.05.2020թ. 022-ի կողմից, հաշվառման հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, գյուղ Ջրափի, 7-րդ փողոց, տուն 14/ սեփականության իրավունքով պատկանող <<MERSEDES-BENZ CLK 320>> մակնիշի 19UU900 պետ. համարանիշի տրանսպորտային փոխադրամիջոցի առ. 20.03.2025 թվականի դրությամբ ունեցած ընդամենը 463421 /չորս հարյուր վաթսուներեք հազար չորս հարյուր քսանմեկ/ ՀՀ դրամ գույքահարկի ապառքի և հաշվարկված տույժերի նկատմաբ սահմանել 50 տոկոսի արտոնություն՝ գումարով՝ 231711 /երկու հարյուր երեսունմեկ հազար յոթ հարյուր տասնմեկ/ ՀՀ դրամ:

Որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 2-րդ մասի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի դրույթներով և հիմք է ընդունվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված <<Համայնքի ավագանու կողմից գույքահարկի և հողի

հարկի արտոնություններ սահմանելու կարգի>> 8-րդ կետը, հաշվի է առնվել նաև այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության քննիչ, երկրորդ դասի խորհրդական Գ. Գրիգորյանի 2025 թվականի հունվարի 10-ի N 5119-651004-25 գրությամբ քաղաքացի Հակոբ Հովհաննեսի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող <<MERSEDES-BENZ CLK 320>> մակնիշի 19UU900 պետ. համարանիշի տրանսպորտային փոխադրամիջոցը 19.05.2019 թվականից մինչև 20.12. 2024 թվականը գտնվել է ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՀՈԳՎ Բաղրամյանի բաժնի հատուկ պահպանվող տարածքում և չի շահագործվել:

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդունվեց:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 27-Ի N 26-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 2-րդ մասի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված <<Համայնքի ավագանու կողմից գույքահարկի եվ հողի հարկի արտոնություններ սահմանելու կարգի>> 8-րդ կետը, հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության քննիչ, երկրորդ դասի խորհրդական Գ. Գրիգորյանի 2025 թվականի հունվարի 10-ի N 5119-651004-25 գրությամբ քաղաքացի Հակոբ Հովհաննեսի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող <<MERSEDES-BENZ CLK 320>> մակնիշի 19UU900 պետ. համարանիշի տրանսպորտային փոխադրամիջոցը 19.05.2019 թվականից մինչև 20.12. 2024 թվականը գտնվել է ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՀՈԳՎ Բաղրամյանի բաժնի հատուկ պահպանվող տարածքում և չի շահագործվել

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 27-ի <<Քաղաքացի Հակոբ Հովհաննեսի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող <<MERSEDES-BENZ CLK 320>> մակնիշի 19UU900 պետ. համարանիշի տրանսպորտային փոխադրամիջոցի նկատմամբ գույքահարկի գծով արտոնություն սահմանելու մասին>> N 26-Ա որոշման մեջ կատարել հետևյալ

փոփոխությունները.

ա) Որոշման վերնագրում նշված <<ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ>> բառերից հետո ավելացմել <<ՄԱՍՆԱԿԻ>> բառը:

բ) Որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ, հետևյալ բովանդակությամբ՝

<<1. Սահմանել գույքահակի մասնակի արտոնություն՝ քաղաքացի Հակոբ Հովհաննեսի Հակոբյանին /Անձնագիր՝ AT0433629, տրված՝ 15.05.2020թ. 022-ի կողմից, հաշվառման հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, գյուղ Ջրափի, 7-րդ փողոց, տուն 14/ սեփականության իրավունքով պատկանող <<MERSEDES-BENZ CLK 320>> մակնիշի 19UU900 պետ. համարանիշի տրանսպորտային փոխադրամիջոցի առ. 20.03.2025 թվականի դրությամբ ունեցած ընդամենը 463 421 /չորս հարյուր վաթսուներեք հազար չորս հարյուր քսանմեկ/ ՀՀ դրամ գույքահարկի ապառքի և հաշվարկված տույժերի 50 տոկոսի նկատմամբ՝ գումարով՝ 231 711 /երկու հարյուր երեսունմեկ հազար յոթ հարյուր տասնմեկ/ ՀՀ դրամ:>>:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարկման հաջորդող օրվանից:

<u>Օրակարգ-8</u>

8) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 162-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

Զեկուցողը նշեց, որ համայնքային ենթակայության <<Անի կոմունալ տնտեսություն>> համայնաքային բյուջետային հիմնարկի և Մարալիկ քաղաքի <<Անի մանկապատանեկան համալիր մարզադպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատանքների բնականոն գործունեությունը ապահովելու համար անհրաժեշտություն է առաջացել Անի համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 17- N 162-Ա որոշման N 9 և N 7 հավելվածներում կատարել հետևյալ փոփոխությունները՝

<<Անի կոմունալ տնտեսություն>> համայնաքային բյուջետային հիմնարկի հաստիքացուցակի 18-րդ կետում <<Սանիտարական մաքրման հավաքարարի /Ձորակապի վարչական շենքի հավաքար/ 0.5 դրույքը փոխարինել 1.0 դրույքով՝ աշխատավարձը սահմանելով 110 000 ՀՀ դրամ: Նշված փոփոխության անհրաժեշտությունը առաջացել է մաքրվող տարածքի մեծածավալ մակերեսի առկայությամբ:

Իսկ որոշման նախագծի 2-րդ կետով նախատեսվում է Մարալիկ քաղաքի <<Անի մանկապատանեկան համալիր մարզադպրոց>> համայնքային ոչ առեվտրային կազմակերպություն հաստիքացուցակում ավելացնել հետևյալ հաստիքային միավորը:

Հ/հ	Հաստիքի անվանումը	Հաստիքի քանակը	Պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամ/	Սահմանված դրույքը	Սահմանված դրույքաչափը /ՀՀ դրամ/

28	Ֆոտբոլի մարզչի օգնական /քաղաք Մարալիկ/	1	104 000	1	104 000

Հաստիքի ավելացման անհրաժեշտությունը կապված է ֆուտբոլի խմբակի պարապմունքների անցկացման արդյունավետության բարձրացմամբ:

Որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի դրույթներով:

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդունվեց:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 162-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի դրույթներով.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի առաջարկությամբ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 17-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի համայնքային ենթակայությամբ բյուջետային հիմնարկների և համայնքային ոչ առեվտրային կազմակերպությունների 2025 թվականի կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 162-Ա որոշման N 9 հավելվածում /<<Անի կոմունալ տնտեսություն>> համայնաքային բյուջետային հիմնարկ/ կատարել հետևյալ փոփոխությունները.

ա) որոշման հավելվածի <<ՍԱՆՄԱՔՐՄԱՆ ՈԼՈՐՏ>> բաժնի 17-րդ կետի 3-րդ սյունակում նշված <<15>> թիվը փոխարինել <<14>> թվով:

բ) որոշման հավելվածի <<ՍԱՆՄԱՔՐՄԱՆ ՈԼՈՐՏ>> բաժնի 17-րդ կետից հետո ավելացնել նոր՝ 18-րդ կետ, հետևյալ խմբագրությամբ՝

Հ/հ	Հաստիքի անվանումը	Հաստիքի քանակը	Պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամ/	Սահմանված դրույքը	Սահմանված դրույքաչափը /ՀՀ դրամ/
18	Սանիտարական մաքրման հավաքարար /մինչև 200 քառ.մետր մակերես/	1	110 000	1	110 000

գ) Նույն բաժնի «Ընդամենը» տողի 6-րդ սյունակում նշված «4 485 000» թիվը փոխարինել «4 540 000» թվով:

դ) Որոշման հավելվածի վերջին <<ԸՆԴԱՄԵՆԸ>> տողի 6-րդ սյունակում նշված «17 410000» թիվը փոխարինել «17 465 000» թվով:

ե) Որոշման հավելվածի 1-ին սյունակի 18-րդ կետից հետո հերթական համարակալումը սահմանել ըստ հերթականության՝ 19-ից 51 թվերով:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի առաջարկությամբ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 17-ի < <Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի համայնքային ենթակայությամբ բյուջետային հիմնարկների և համայնքային ոչ առեվտրային կազմակերպությունների 2025 թվականի կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 162-Ա որոշման N 7 հավելվածում /Անի համայնքի Մարալիկ քաղաքի <<Անի համալիր մարզադպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն/ կատարել հետևյալ փոփոխությունները.

ա) Որոշման հավելվածի 27-րդ կետից հետո ավելացնել 28-րդ կետ հետևյալ խմբագրությամբ՝

Հ/հ	Հաստիքի անվանումը	Հաստիքի քանակը	Պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամ/	Սահմանված դրույքը	Սահմանված դրույքաչափը /ՀՀ դրամ/
28	Ֆոտբոլի մարզչի օգնական /քաղաք Մարալիկ/	1	**104 000**	**1**	**104 000**

բ) վերջին՝ «Ընդամենը» տողի 3-րդ սյունակում նշված «36» թիվը փոխարինել «37» թվով, Նույն տողի 4-րդ սյունակում նշված «3 484 000» թիվը փոխարինել «3 588 000» թվով, նույն տողի 5-րդ սյունակում նշված «31.5» թիվը փոխարինել «32.5» թվով, նույն տողի 6-րդ՝ սյունակում նշված «3 965 000» թիվը փոխարինել «4 069 000» թվով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

<u>Օրակարգ-9</u>

9) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 165-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

Զեկուցողը նշեց, որ որոշման նախագծով նախատեսվում է Անի համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 17-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող տրանսպորտային միջոցների, մեխանիզմների և սարքավորումների միջոցով ծառայություններ մատուցելու դիմաց 2025 թվականի համար գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 24-ի N 25-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 165-Ն որոշման հավելվածի 3-րդ կետում կատարել փոփոխություն և պարզեցնել համայնքի սեփականություն հանդիսացող **ԳԱԶ-G41R13-1060** մակնիշի Ասինիզատորի միջոցով ծառայության մատուցման դիմաց սահմանված վճարի դրույքաչափերը:

Որոշմամբ սահմանված է հետևյալ դրույքաչափերը՝

Հ/h	Համայնքի կողմից մատուցվող ծառայության տեսակը, անվանումը	Սահմանված դրույքաչափերը /ՀՀ դրամ/
3.	**ԳԱԶ-G41R13-1060 մակնիշի Ասինիզատորի միջոցով ծառայության մատուցման դիմաց /ներառյալ դիզելային վառելանյութի ծախսը/**	X
	Մինչև 5 կիլոմետր հեռավորության վրա մեկ մեքենա տարողության ծառայության դիմաց	8 000
	Մինչև 10 կիլոմետր հեռավորության վրա մեկ մեքենա տարողության ծառայության դիմաց	12 000
	Մինչև 30 կիլոմետր հեռավորության վրա մեկ մեքենա տարողության ծառայության դիմաց	17 000
	Մինչև 50 կիլոմետր հեռավորության վրա մեկ մեքենա տարողության ծառայության դիմաց	25 000
	Մինչև 100 կիլոմետր հեռավորության վրա մեկ մեքենա տարողության ծառայության դիմաց	50 000
	100 կմ և ավելի հեռավորության վրա մեկ մեքենա տարողության ծառայության դիմաց	100 000
	Յուրաքանչյուր հաջորդ մեկ մեքենա տարողության ծառայության դիմաց	6 000

Նախագծով նախատեսվում է սահմանել ծառայության հետևյալ պարզեցված դրույքաչափը:

Հ/h	Համայնքի կողմից մատուցվող ծառայության տեսակը, անվանումը	Սահմանված դրույքաչափերը /ՀՀ դրամ/

3.	**ԳԱԶ-G41R13-1060 մակնիշի Ասինիզատորի միջոցով ծառայության մատուցման դիմաց /ներառյալ դիզելային վառելանյութի ծախսը/**	**X**
	Համայնքի բնակավայրերում ասինիզատորի միջոցով մեկ մեքենա տարողության ծառայության դիմաց	8 000
	Յուրաքանչյուր հաջորդ մեկ մեքենա տարողության ծառայության դիմաց	6 000

Որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի դրույթներով:

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդունվեց:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 165-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի դրույթներով, հիմք ընդունելով Անի համայնքի ղեկավարի առաջարկությունը

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 17-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող տրանսպորտային միջոցների, մեխանիզմների և սարքավորումների միջոցով ծառայություններ մատուցելու դիմաց 2025 թվականի համար գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 24-ի N 25-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 165-Ն որոշման հավելվածի 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող ուվանից:

Հավելվածը կցվում է արձանագրությանը:

Օրակարգ-10

10) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 181-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Հայկ Սիմոնյան/

Զեկուցողը համայնքի ավագանուն ներկայացրեց համայնքի 2025 թվականի բյուջեում նախատեսված հետևյալ փոփոխությունները՝

1. Գործառական դասակարգման բաժին 01 խումբ 06, դաս 01 (Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ) և տնտեսագիտական դասակարգման 4234 (Տեղեկատվական ծառայություններ) հոդվածի «100.0» թիվը փոխարինել «1100,0» թվով, 5129 (Այլ մեքենաներ և սարքավորումներ) հոդվածի «0» թիվը փոխարինել «1000,0» թվով:

2. Գործառական դասակարգման բաժին 04 խումբ 05, դաս 01 (Ճանապարհային տրանսպորտ) և տնտեսագիտական դասակարգման 5112 (Շենքերի և շինությունների կառուցում) հոդվածի «230000,0» թիվը փոխարինել «229000,0» թվով:

3. Գործառական դասակարգման բաժին 05 խումբ 03, դաս 01 (Սան.մաքրում) և տնտեսագիտական դասակարգման 4241 (Մասնագիտական ծառայություններ) հոդվածի «1000.0» թիվը փոխարինել «990,0» թվով, 4215 (Ապահովագրական ծախսեր) հոդվածի «600.0» թիվը փոխարինել «610,0» թվով:

4. Գործառական դասակարգման բաժին 01. խումբ 01, դաս 01 (Ապարատի պահպանման ծախսեր) և տնտեսագիտական դասակարգման 4269 (Հատուկ նպատակային նյութեր) հոդվածի «15000.0» թիվը փոխարինել «13700.0» թվով:

5. Գործառական դասակարգման բաժին 10. խումբ 07, դաս 01 (Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) և տնտեսագիտական դասակարգման 4729 (Այլ նպաստներ բյուջեից) հոդվածի «0» թիվը փոխարինել «300,0» թվով:

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդունվեց:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 181-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, <<Բյուջետային

համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1--3-րդ մասերի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2025 թվականի բյուջեի հաստատման մասին>> N 181-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Հավելվածը կցվում է արձանագրությանը:

Օրակարգ-11

11) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՐԱԿԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԵՐԿՈՒ ԿՏՈՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹՈՎ, ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ՄՐՑՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար տեղակալ Զորիկ Խաչատրյան/

Զեկուցողը նշեց, որ որոշման նախագծով նախատեսվում Անի համայնքի Շիրակավան բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող հողատեսքի երկու կտոր հողամասերը, գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով, բաց մրցույթով, հրապարակային սակարկությունների միջոցով տրամադրել վարձակալության:

Նախագծի հավելվածով վարելահող հողատեսքի երկու կտոր հողամասերի բաց մրցույթով, հրապարակային սակարկությունների միջոցով, վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրման մրցույթի հետևյալ պայմաններն ու վարձավճարի մեկնարկային չափերը

N	Հողամասի գտնվելու վայրը	Հողամասի կադաստրային ծածկագիրը / Վկայական N	Հողամասի նպատակային նշանակու-թյունը	Հողամասի հողատեսքը	Հողի որակական հատկանիշները /ջրովի/անջրդի, հողի կարգ/	Հողամասի մակերեսը (հա)	Մրցույթի ձևը	Վարձակա-լության ժամկետը (տարի)	Հողամասի մեկ տարվա վարձա-վճարի մեկնար-կային չափը (ՀՀ դրամ)	Մրցույթի մասնակցության նախավճարի չափը (ՀՀ դրամ)

1.	Մարզ Շիրակ, Անի համայնք, գյուղ Շիրակավան վարելահող	08-090-0250-0074 24102013-08-0027	Գյուղատնտեսական	Վարելահող	Անջրդի IV կարգ	0.40497	Բաց, հրապարակային սակարկություն	10	3000	Մրցույթի առարկայի մեկնարկային գնի 5 տոկոս
2.	Մարզ Շիրակ, Անի համայնք, գյուղ Շիրակավան վարելահող	08-090-0250-0067 24102013-08-0002	Գյուղատնտեսական	Վարելահող	Անջրդի IV կարգ	0.695653	Բաց, հրապարակային սակարկություն	10	5000	Մրցույթի առարկայի մեկնարկային գնի 5 տոկոս

Որոշման ընդունումը կարգավորվում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի, 48-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ մասերի, 76-րդ հոդվածի 1-ին, 3-րդ մասերի, 78-րդ հոդվածի 3-րդ մասի, 81-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով:

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդունվեց:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՐԱԿԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԵՐԿՈՒ ԿՏՈՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹՈՎ, ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ՄՐՑՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի, 48-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ մասերի, 76-րդ հոդվածի 1-ին, 3-րդ մասերի, 78-րդ հոդվածի 3-րդ մասի, 81-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Շիրակավան բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող սույն որոշման հավելվածում նախատեսված գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող հողատեսքի երկու կտոր հողամասերը, գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով, բաց մրցույթով, հրապարակային սակարկությունների միջոցով տրամադրել վարձակալության:

2. Հաստատել հողամասի վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրման մրցույթի պայմաններն ու վարձավճարի մեկնարկային չափերը՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հավելվածը կցվում է արձանագրությանը:

Օրակարգ-12

12) <<ՊՐԵՍ ՍՏԵՆԴ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՄԱՐԶ ՇԻՐԱԿ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔ ՔԱՂԱՔ ՄԱՐԱԼԻԿ ՀՐ. ՇԱՀԻՆՅԱՆ ՓՈՂՈՑ 16/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԿՐՊԱԿԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ 0,00062 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար տեղակալ Զորիկ Խաչատրյան/

Զեեկուցողը նշեց, որ Անի համայնքի ղեկավարին է դիմել <<ՊՐԵՍ ՍՏԵՆԴ>> սահմանափակ պատասխանատվության ընկերության տնօրենը Անի հաամյանքի ղեկավարի և ընկերության միջև կնքված <<Հողամասի վարձակալության մասին>> 2015 թվականի դեկտեմբերի 24-ին կնքված ընկերությանը պատկանող կրպակի շենքի պահպանման ու սպասարկման համար նախատեսված հողմասի պայմանագրի ժամկետը 5 տարով երկարացնելու խնդրանքով:

Որոշման նախագծով նախատեսվում է բավարարել ընկերության խնդրանքը և Անի համայնքի ղեկավարի և <<ՊՐԵՍ ՍՏԵՆԴ>> սահմանափակ պատասխանատվության ընկերության միջև 2015 թվականի դեկտեմբերի 24-ին կնքված <<Հողամասի վարձակալության մասին>> պայմանագրի 15-րդ կետով սահմանված վարձակալության ժամկետը երկարացնել 5 /հինգ/ տարով՝ մինչև 2032 թվականի դեկտեմբերի 24-ը: Իսկ որոշման նախագծի 2-րդ կետով նախատեսված է պայմանագրի 8-րդ կետով նախատեսված հողամասի տարեկան վարձավճարի 3000 դրամ չափը սահմանել 20000 /քսան հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ, որի կապակցությամբ վարձակալի հետ ձեռք է բերվել համապատասխան համաձայնություն:

Որոշման ընդունումը կարգավորվում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթով, հիմք է ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման 2-րդ կետով հաստատված <<Հողամասի վարձակալության մասին պայմանագրի>> 10-րդ և 18-րդ կետերը և հաշվի է առնվել Անի համայնքի ղեկավարի և <<ՊՐԵՍ ՍՏԵՆԴ>> սահմանափակ պատասխանատվության ընկերության միջև կնքված <<Հողամասի վարձակալության մասին>> 2015 թվականի դեկտեմբերի 24-ին կնքված պայմանագրի 10-րդ և 18-րդ կետերը:

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդունվեց:

<<ՊՐԵՍ ՍՏԵՆԴ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՄԱՐԶ ՇԻՐԱԿ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔ ՔԱՂԱՔ ՄԱՐԱԼԻԿ ՀՐ. ՇԱՀԻՆՅԱՆ ՓՈՂՈՑ 16/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԿՐՊԱԿԻ ՇԵՆՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ 0,00062 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման 2-րդ կետով հաստատված <<Հողամասի վարձակալության մասին պայմանագրի>> 10-րդ և 18-րդ կետերը, հաշվի առնելով Անի համայնքի ղեկավարի և <<ՊՐԵՍ ՍՏԵՆԴ>> սահմանափակ պատասխանատվության ընկերության /հետագայում Կողմեր/ միջև կնքված <<Հողամասի վարձակալության մասին>> 2015 թվականի դեկտեմբերի 24-ին կնքված պայմանագրի 10-րդ և 18-րդ կետերը և կողմերի միջև ձեռք բերված համաձայնությունը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի և <<ՊՐԵՍ ՍՏԵՆԴ>> սահմանափակ պատասխանատվության ընկերության միջև 2015 թվականի դեկտեմբերի 24-ին կնքված <<Հողամասի վարձակալության մասին>> պայմանագրի /հետագայում՝ Պայմանագիր/ 15-րդ կետով սահմանված վարձակալության ժամկետը երկարացնել 5 /հինգ/ տարով՝ մինչև 2032 թվականի դեկտեմբերի 24-ը:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված Պայմանագրի 8-րդ կետով նախատեսված հողամասի տարեկան վարձավճարի չափը սահմանել 20 000 /քսան հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Անի համայնքի ղեկավար Ա. Սարիբեկյանին.

ա) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Վարձակալի հետ կնքել համապատասխան համաձայնագիր:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

<u>Օրակարգ-13</u>

13) ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ /GIZ/ ԿՈՂՄԻՑ ԳՈՐԾԱԴՐՎՈՂ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար տեղակալ Զորիկ Խաչատրյան/

Զեկուցողը նշեց, որ որոշման նախագծով նախատեսվում է համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի մասնակցությանը՝ Գերմանական միջազգային համագործակցության ընկերության /GIZ/ կողմից գործադրվող Տեղական զարգացման հիմնադրամի շրջանակներում դրամաշնորհային մրցույթին և համաձայնություն տալ դրամաշնորհային մրցույթին ներկայացվող ծրագրային հայտ-առաջարկի հաստատման դեպքում Անի համայնքի 2025 թվականի բյուջեից կատարել համապատասխան համաներդրում:

Տեղեկացնեմ, որ համայնքապետարանի կողմից ս.թ. մարտի 25-ին արդեն ներկայացվել է համայնքի զարգացմանն ուղղված ներդրումային ծրագիր, որով հայցվող գումարի չափը կազմում է 30 000 եվրո: Ծրագիրը հաստատվելու դեպքում նախատեսվում է ձեռք բերել տրանսպորտային միջոց և ներքին ենթագոտու բնակավայրերի սպասարկման համար տեղադրել սպասարաններ: Համայնքից պահանջվող համաֆինանսավորման չափը ծրագրի արժեքի նկատմամբ կազմում է 20 տոկոս:

Որոշման ընդունումը կարգավորվում է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետի, 13-րդ հոդվածի 10-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի դրույթներով:

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդունվեց:

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ /GIZ/ ԿՈՂՄԻՑ ԳՈՐԾԱԴՐՎՈՂ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետի, 13-րդ հոդվածի 10-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի դրույթներով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին

որոշում է

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի մասնակցությանը՝ Գերմանական միջազգային համագործակցության ընկերության /GIZ/ կողմից գործադրվող Տեղական զարգացման հիմնադրամի շրջանակներում դրամաշնորհային մրցույթին:

2. Համաձայնություն տալ դրամաշնորհային մրցույթին ներկայացվող ծրագրային հայտ-առաջարկի հաստատման դեպքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2025 թվականի բյուջեից կատարել համապատասխան համաներդրում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Օրակարգ-14

14) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 100 ԵՎ ԱՎԵԼ ՏԱՐԵԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

Զեկուցողը նշեց, որ որոշման նախագծով նախատեսվում է Անի համայնքի 100 և ավել տարեկան անձանց համար Անի համայնքի բյուջեի Գործառնական դասակարգման բաժին 10, խումբ 07, դաս 01 /Սոցիալական հատուկ արտոնություններ /այլ դասերին չպատկանող/ և տնտեսագիտական դասակարգման 4729 /Այլ նպաստներ բյուջեից/ հոդվածից սահմանել 100000 /մեկ հարյուր հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ դրամական աջակցություն:

Համոզմունք հայտնեց, որ այս նախաձեռնությունը մեծ հարգանքի և մեծարման վերաբերմունքի դրսևորում կհանդիսանա համայնքի 100 և ավել տարեկան անձանց նկատմամբ:

Որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 42-րդ կետերի դրույթներով և հիմք է ընդունվել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 15-ի N 7-Ա որոշումը /կամավոր լիազորություն/:

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդունվեց:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 100 ԵՎ ԱՎԵԼ ՏԱՐԵԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 42-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 15-ի N 7-Ա որոշումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 100 և ավել տարեկան անձանց համար Անի համայնքի բյուջեի Գործառնական դասակարգման բաժին 10, խումբ 07, դաս 01 /Սոցիալական հատուկ արտոնություններ /այլ դասերին չպատկանող/ և տնտեսագիտական դասակարգման 4729 /Այլ նպաստներ բյուջեից/ հոդվածից սահմանել 100000 /մեկ հարյուր հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ դրամական աջակցություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Օրակարգ-15

15) ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՅԱՑԱԾ ԵՐԳԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆՈՒՄ ՄՐՑԱՆԱԿԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ՏԵՂ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑ ՍԱՄՎԵԼ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

Զեկուցողը նշեց, որ որոշման նախագծով նախատեսվում է Իտալիայի Հանրապետությունում կայացած երգի միջազգային փառատոնում մրցանակային առաջին տեղ զբաղեցրած մասնակից, Անի համայնքի <<Մարալիկի երաժշտական դպրոց>> բյուջետային հիմնարկի սան՝ Սամվել Գասպարյանին Անի համայնքի 2025 թվականի բյուջեի Գործառնական դասակարգման բաժին 10, խումբ 07, դաս 01 և տնտեսագիտական դասակարգման 4727 /Կրթական մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից/ հոդվածից տրամադրել 100000 /մեկ հարյուր հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ դրամական պարգևատրում:

Հաշվի առնելով, որ մրցանակային առաջին տեղ զբաղեցրած պատանին անչափահաս է, որոշման նախագծով նախատեսված է դրամական պարգևատրումը հատկացնել Սամվել Գասպարյանի ծնող՝ Հերմինե Վարազդատի Ժաժոյանին:

Համայնքապետարանը մշտապես աջակցում և խրախուսում է մշակույթի, արվեստի և սպորտի բնագավառում մրցանակային բարձր տեղեր նվաճած մեր շնորհալի մասնակիցներին:

Որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 42-րդ կետերի դրույթներով և հիմք է ընդունվել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 15-ի N 7-Ա որոշումը:

Որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություն ներկայացվեց ավագանու անդամ Նաիրա Սարոյանի կողմից:

Առաջարկվեց՝ հաշվի առնելով, որ երեխայի Իտալիայի Հանրապետություն կատարած այցի տեղափոխման ծախսերը ամբողջությամբ կատարել են ծնողները, պարգևատրման գումարի չափը սահմանել 150 000 ՀՀ դրամ:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով արված առաջարկությամբ ավագանու որոշումն ընդունվեց:

ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՅԱՑԱԾ ԵՐԳԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆՈՒՄ ՄՐՑԱՆԱԿԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ՏԵՂ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑ ՍԱՄՎԵԼ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 42-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 15-ի N 7-Ա որոշումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է

1. Իտալիայի Հանրապետությունում կայացած երգի միջազգային փառատոնում մրցանակային առաջին տեղ զբաղեցրած մասնակից, Անի համայնքի <<Մարալիկի երաժշտական դպրոց>> բյուջետային հիմնարկի սան՝ Սամվել Գասպարյանին Անի համայնքի 2025 թվականի բյուջեի Գործառնական դասակարգման բաժին 10, խումբ 07, դաս 01 և տնտեսագիտական դասակարգման 4727 /Կրթական մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից/ հոդվածից տրամադրել 150000 /մեկ հարյուր հիսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ դրամական պարգևատրում:

2. Սույն որոշման 1-ին կետով նախատեսված դրամական պարգևատրումը հատկացնել Սամվել Գասպարյանի ծնող՝ Հերմինե Վարազդատի Ժաժոյանին /անձնագիր AT0665042, տրված՝ 11.02.2021թ. 022-ի կողմից, հաշվառման հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ Շիրազի փողոց, շենք 15, բնակարան 6/:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

<u>Օրակարգ-16</u>

16) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ԱՐԿԱԴԻ ՏԵՐ-ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ 6/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-003-0613-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,000192 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ԿԱՐԳՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ՍԱՄՎԵԼ ՄԱՆՈՒԿԻ ԺԱԺՈՅԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎՃԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար տեղակալ Զորիկ Խաչատրյան/

Զեկուցողը նշեց, որ Անիի համայնքապետարան է դիմել քաղաքացի Սամվել Մանուկի Ժաժոյանը՝ սուրճեփ ինքնաշխատ սարքավորում տեղադրելու համար համապատասխան հողամաս հատկացնելու խնդրանքով: Կատարված ուսումնասիրությունների արդյունքում սուրճեփ ինքնաշխատ սարքավորում տեղադրելու համար նախընտրելի է համարվել Մարալիկ քաղաքի Արկադի Տեր-Թադևոսյան փողոցի 16/3 հասցեում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության 08-003-0613-0002 կադաստրային ծածկագրով 0,000192 հեկտար մակերեսով հողամասը, որ հարակից է տվյալ անձի ընտանիքին պատկանող առևտրի օբյեկտին:

Որոշման նախագծով նախատեսվում է Անի համայնքի Մարալիկ քաղաքի Արկադի Տեր-Թադևոսյան փողոցի 16/3 հասցեում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության 08-003-0613-0002 կադաստրային ծածկագրով 0,000192 հեկտար մակերեսով հողամասը /Վկայական՝ 18112024-08-0015/, ուղղակի կարգով, կառուցապատման իրավունքով, 5 /հինգ/ տարի ժամկետով, տարեկան 20 000 /քսան հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ վճարով օգտագործման տրամադրել քաղաքացի Սամվել Մանվելի Ժաժոյանին /Անձնագիր՝ AV0603888, տրված՝ 18.01.2023թ. 022-ի կողմից, հաշվառման հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ Կոլտնտեսականների փողոց տուն 3, հետագայում՝ Քաղաքացի/՝ այդ հողամասում սուրճեփ ինքնաշխատ սարքավորում տեղադրելու նպատակով:

Որոշման ընդունումը կարգավորվում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48[1]-րդ հոդվածի 1-ին, 4-րդ, 8-րդ մասերի, 56-րդ հոդվածի 5-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որշմամբ հաստատված <<Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի>> 46.2.-րդ կետի <<ա>> ենթակետի դրույթներով և հաշվի է առնվել, որ համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության 08-003-0613-0002 կադաստրային ծածկագրով 0,000192 հեկտար մակերեսով հողամասը ընդգրկված է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի կազմում:

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդունվեց:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ԱՐԿԱԴԻ ՏԵՐ-ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ 6/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ,

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-003-0613-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,000192 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ԿԱՐԳՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ՍԱՄՎԵԼ ՄԱՆՈՒԿԻ ԺԱԺՈՅԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎՃԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին, 4-րդ, 8-րդ մասերի, 56-րդ հոդվածի 5-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որշմամբ հաստատված <<Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի>> 46.2.-րդ կետի <<ա>> ենթակետի դրույթներով և հաշվի առնելով, որ համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության 08-003-0613-0002 կադաստրային ծածկագրով 0,000192 հեկտար մակերեսով հողամասը ընդգրկված է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի կազմում, հաշվի առնելով քաղաքացի Սամվել Մանուկի Ժաժոյանի 2025 թվականի մարտի 20-ի դիմումը՝ սուրճեփ սարքավորում տեղադրելու համար հողամաս հատկացնելու վերաբերյալ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ, տալ համաձայնություն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Արկադի Տեր-Թադևոսյան փողոցի 16/3 հասցեում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության 08-003-0613-0002 կադաստրային ծածկագրով 0,000192 հեկտար մակերեսով հողամասը /Վկայական՝ 18112024-08-0015/, ուղղակի կարգով, կառուցապատման իրավունքով, 5 /հինգ/ տարի ժամկետով, տարեկան 20 000 /քսան հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ վճարով օգտագործման տրամադրել քաղաքացի Սամվել Մանվելի Ժաժոյանին /Անձնագիր՝ AV0603888, տրված՝ 18.01.2023թ.

022-ի կողմից, հաշվառման հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ Կոլտնտեսականների փողոց տուն 3, հետագայում՝ Քաղաքացի/՝ այդ հողամասում սուրճեփ ինքնաշխատ սարքավորում տեղադրելու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Արման Սարիբեկյանին.

ա) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Քաղաքացու հետ կնքել հողամասի կառուցապատման իրավունքի պայմանագիր.

բ) Սույն որոշումից բխող իրավունքները օրենքով սահմանված կարգով ենթակա են պետական գրանցման՝ Քաղաքացու միջոցներով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Օրակարգ-17

17) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ՕՐԻՆԱԿԱՆ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏԱԾ ՎՃՌՈՎ /ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾ՝ ՇԴ/0347/02/24/ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԵՍՏԱԿ ՀԱԲԵԹԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՐԶ ՇԻՐԱԿ, ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ՔԱՂԱՔ ՄԱՐԱԼԻԿ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 14/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆԱՍՆԱՇԵՆՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 08-003-0026-ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,03205 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԵՍՏԱԿ ՀԱԲԵԹԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

Զեկուցողը նշեց, որ Անիի համայնքապետարան է դիմել Մարալիկ քաղաքի բնակիչ Արեստակ Հաբեթի Խաչատրյանը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2024 թվականի հոկտեմբերի 29-ի օրինական ուժի մեջ մտած վճիռով /քաղաքացիական գործ՝ ՇԴ/0347/02/24/՝ քաղաքացու սեփականությունը ճանաչված մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ երիտասարդական փողոց թիվ 14/1 հասցեում գտնվող անասնաշենքի պահպանման ու սպասարկման համար նախատեսված հողամասը իրեն վաճառելու խնդրանքով:

Որոշման նախագծով նախատեսվում է Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի օրինական ուժի մեջ մտած նշված վճիռով քաղաքացի Արեստակ Հաբեթի Խաչատրյանի սեփականության իրավունքը ճանաչելու մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ երիտասարդական փողոց թիվ 14/1 հասցեում գտնվող անասնաշենքի պահպանման ու սպասարկման համար նախատեսված 08-003-0026- կադաստրային ծածկագրով հողատարածքում գտնվող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակություն, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակություն 0,03205 հեկտար մակերեսով հողամասը, ուղղակի վաճառքով, տվյալ հողամասի կադաստրային արժեքի չափով, ընդամենը՝ **253 840 (երկու հարյուր հիսուներեք հազար ութ հարյուր քառասուն)** Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով վաճառել քաղաքացի Արեստակ Հաբեթի Խաչատրյանին (անձնագիր՝ AV 0621378, տրված՝ 01.02.2023 թվականին, 022-ի կողմից, հաշվառման հասցեն՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Երիտասարդականների փողոց տուն 92/:

Որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ, 2-րդ մասի դրույթներով և հիմք է ընդունվել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2024 թվականի հոկտեմբերի 29-ի օրինական ուժի մեջ մտած վճիռը /քաղաքացիական գործ՝ ՇԴ/0347/02/24/:

Քննարկման արդյունքում որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ավագանու որոշումն ընդունվեց:

Նիստը վարող համայնքի ղեկավար Արման Սարիբեկյանը հայտարարեց, որ Անի համայնքի ավագանու նիստի օրակարգի հարցերը սպառված են, նիստը հայտարարվեց փակված:

Շնորհակալություն հայտնվեց նիստի մասնակցության համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐՄԱՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝
ԱՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ **ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԲԱՐՅԱՆ**

<<27>> մարտի 2025 թ.
քաղաք Մարալիկ